Պերճ Զեյթունցյան

Արձակագիր, դրամատուրգ, Հռոմի արվեստների և հասարակական գիտությունների «Թիբերինա» ակադեմիայի պատվավոր անդամ, ՀԳՄ անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ:

Ծնվել է 1938թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում:

1948թ. ընտանիքը ներգաղթել են Հայաստան: Ավարտել է Պյատիգորսկի (ՌԴ) հեռակա մանկավարժական ինստիտուտը և Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացները: Եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի խմբագրական կոլեգիայի գլխավոր խմբագիրը, պաշտոնավարել է ՀԳՄ-ում որպես վարչության քարտուղար, եղել է «Պիոներ» մանկապատանեկան ամսագրի գլխավոր խմբագիրը, իսկ 1991-92թթ.՝ ՀՀ մշակույթի առաջին նախարարը:

Հեղինակ է մի շարք վեպերի, վիպակների, պիեսների, որոնց մեծ մասը պատմական է՝ «Արշակ Երկրորդ», «Մեծ լռություն», «Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը», «Մի նայիր հայելուն» և այլն:

Նրա պիեսները բեմադրվել են Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական և Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոններում:

Գրողի ստեղծագործությունները թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, արաբերեն, չեխերեն, հունգարերեն և այլ օտար լեզուներով: Կատարել է թարգմանություններ անգլերենից՝ Էռնեստ Հեմինգուեյ՝ «Հրաժեշտ զենքին», «Կլիմանջարոյի ձյունները», Գրեհեմ Գրեն՝ «Խաղաղ ամերիկացին» և այլն:

Արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի, «Մովսես Խորենացի» մեդալի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո շքանշանի, «Հայ արվեստի ասպետ» կոչմանը, «Ոսկե գրիչ» մրցանակի: